

ԳԻՏԱԿԱՆ ԵՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԵՆՐԴՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ

ԳԱԳԻԿ ԲԼԵՏԱՆ. ԱՐԱՐԱՏ ԳՈՄՅՅԱՆ

Գիտատեխնիկական առաջընթացի արդի պայմաններում հասարակական արտադրության ինտենսիվ զարգացումը դարձել է նրա արդյունավետության բարձրացման կարևոր գործոն: Այդ իսկ պատճառով արդյունաբերական արտադրության ինտենսիվացման ազդակները, դրանց զնահատման մեթոդները և տնտեսական մի շարք այլ հարցերի ուսումնասիրությունը ստանում է կարևոր ժողովրդատնտեսական նշանակություն: Գիտատեխնիկական առաջընթացի տեմպերի արագացման գործում կարևոր նշանակություն է ստանում գիտական նվաճումների (նոր տեխնիկայի) արդյունաբերական յուրացման ժամկետների կրճատումը, որը ի թիվս այլ գործոնների կարելի է ապահովել նոր տեխնիկայի (արտադրանքի) արտադրության յուրացմանը մասնակցող կոլեկտիվների տնտեսական շահագրգռվածությունը բարձրացնելու միջոցով:

Դեռևս այնքան էլ հստակ բացահայտված չէ «նոր տեխնիկա» հասկացության տնտեսական էությունը, մի հանգամանք, որը կարող է մեծ պայմանականություն մտցնել նոր տեխնիկայի պլանավորման, տնտեսական խթանման ու արդյունավետության զնահատման գործում: Հայտնի է, որ նոր տեխնիկան գիտատեխնիկական առաջադիմության դրսևորման առավել կարևոր ձևերից է, նրա արդյունքը և իրացման եղանակը: Նոր տեխնիկայի շարքին է դասվում տվյալ երկրում առաջին անգամ թողարկվող արտադրանքը՝ նոր ստանդարտներով ու տեխնիկական պայմաններով, կառուցվածքով, թողարկման տեխնոլոգիայով, ինչպես նաև օգտագործման տվյալ բնագավառում ի հայտ եկող տեխնիկատնտեսական և շահագործողական հատկություններով¹:

Նոր արտադրանքի արտադրության յուրացման տնտեսական հիմնական խնդիրներն ընդհանուր են սոցիալիստական արդյունաբերության, այդ թվում նաև մեքենաշինության և դրա առաջատար ենթաճյուղերից մեկի՝ սարքաշինության համար: Այդ ենթաճյուղում նոր արտադրանքի արտադրության յուրացմանը և ներդրմանը մասնակցող կոլեկտիվների տնտեսական շահագրգռվածության բարձրացման միջոցառումների համալիրում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում նոր արտադրանքի արտադրության առաջին տարվա ինքնարժեքի պլանավորման ու նյութական խթանման մեխանիզմի հետագա կատարելագործումը:

Հայաստանի սարքաշինական մի շարք ձեռնարկությունների կողմից նոր արտադրանքի արտադրության յուրացման փուլատարի նյութերի ուսումնասի-

¹ ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1979 թ. պետական պլանով նախատեսված է յուրացնել ավելի քան շորս հազար նոր տեսակի մեքենաների, սարքավորումների, սարքերի: և նյութերի արտադրությունը («Սոցիալական Հայաստան», 36. XI. 1978):

րությունից պարզվում է, որ սարքերի սերիական թողարկումը կազմակերպելու նույնիսկ 2—3-րդ տարիների ընթացքում նոր արտադրանքի արտադրության ծախքերը բավականաչափ բարձր են, չնայած միավոր արտադրանքի ծախքերը ինչ-որ չափով իջնում են: Նոր արտադրանքի արտադրության միայն 4—5-րդ տարում է նկատվում ինքնարժեքի արագ իջեցում՝ օրինակ, 30—33%-ով: Դրանց արտադրության 6—7-րդ տարիներին ինքնարժեքը գրեթե կայունանում է, և նրա իջնելու տեմպերը տարեկան, մեկ տոկոսից չեն գերազանցում: Այս իսկ պատճառով ժամանակից կախված արտադրության ծախքերի նվազումը փոխում է գնի կառուցվածքը, որի պայմաններում արտադրողի շահագրգռվածությունն ուղիղ համեմատական է դառնում արտադրանքի շահույթի և շահութաբերության աճին: Ժամանակի առումով որքան տևական է արտադրանքի արտադրությունը, այնքան (կայուն գների պայմաններում) մեծ է արտադրողի շահագրգռվածությունը նրա արտադրությունը հետագայում շարունակելու հարցում: Ուստի գնի յուրաքանչյուր մակարդակ կարող է խթանող ներգործություն ունենալ տեխնիկայի նորացման ժամկետների վրա՝ արտադրության ծախքերի դինամիկայի հետ նրա օպտիմալ զուգակցման պայմաններում:

Յուրացված արտադրանքի թողարկման ծախքերի յուրաքանչյուր հոգվածի համեմատական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու առանձին տարիներին ինքնարժեքի բարձր մակարդակի պատճառները: Նոր արտադրանքի թողարկման սկզբնական շրջանում ինքնարժեքի մակարդակը պայմանավորող տեխնիկական, տեխնոլոգիական և կազմակերպչական գործոնների վերլուծությունից հետևում է, որ գոյություն ունեն օբյեկտիվ, սակայն ոչ տևական պատճառներ, որոնք արտադրության սկզբնական շրջանում հանգեցնում են լրացուցիչ ծախսերի: Դրանցից գլխավորներն են. ա) նոր արտադրանքի պատրաստման տեխնոլոգիայի համար անհրաժեշտ և կիրառվող սարքավորումների տարբերությունները, բ) բանվորների մասնակի վերաորակավորման անհրաժեշտությունը, գ) արտադրության տեխնոլոգիական պրոցեսի ոչ կատարյալ լինելը, դ) ելանյութի ոչ միատարրությունը, ե) ինժեներատեխնիկական աշխատողների (ԻՏԱ) որակավորման մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը, զ) նոր արտադրանքի յուրացման ժամկետների կրճատման համար ԻՏԱ-ի դեռևս անբավարար նյութական շահագրգռվածությունը, է) նյութական ծախսումների տեսակարար նորմաների տարբերությունը, ը) միևնույն տեխնոլոգիական պրոցեսում արտադրանքի թողարկման նորմաների և վարձատրության տարբերությունները, թ) նոր արտադրանքի կառուցվածքի բարդությունը և այլն:

Պարզվում է, որ ձեռնարկությունները նոր արտադրանքի թողարկման նախնական փուլում հնարավորություն չունեն ճշտորեն որոշելու այն լրացուցիչ ծախսումները, որոնք ձևավորվում են վերոհիշյալ գործոնների ազդեցությամբ: Լրացուցիչ այդ ծախսումները խոչընդոտ են դառնում նոր արտադրանքի թողարկմանը, ինչպես նաև ձգձգում են վերջինիս յուրացման ժամկետները: Այսպես, նոր արտադրանքի բարձր ինքնարժեքը, որը չի փոխհատուցվում համապատասխան մեծածախ գներով, արտադրության սկզբնական շրջանում չի բարելավում ձեռնարկությունների աշխատանքի տնտեսաշարկային ցուցանիշները: Այս առումով առաջացող տնտեսական վնասները ծածկելու նպատակով ձեռնարկությունները սկսում են սահմանել արտադրանքի նոր, առավել բարձր մեծածախ գներ: Դա հակասում է սպառողների շահերին:

Նոր արտադրանքի սերիական արտադրության յուրացումը պայմանավորվում է կանխորոշվում է նաև նորույթը մշակող հետազոտողների ու կոնստրուկտորների մասնակցությամբ: Սակայն վերջիններիս աշխատանքի խրախուսումը կախված չի լինում նոր արտադրանքն արտադրող ձեռնարկության տրեստեական արդյունքներից: Բացի այդ, խթանման ֆոնդերի ձևավորման գործող համակարգը ձեռնարկությունների համար նախընտրելի է դարձնում արտադրության զարգացման էքստենսիվ ուղիները (արդեն յուրացված արտադրանքի հետագա ընդլայնումը), որը հակասում է ժամանակակից գիտատեխնիկական նվաճումներն արտադրության մեջ ներդնելու և վերջինիս հիման վրա հանրային արտադրության արդյունավետությունը բարձրացնելու խնդիրներին:

Նոր արտադրանքի յուրացման հետ կապված՝ ձեռնարկությունների վնասը, որը առաջին տարում եղած արտադրության բարձր ծախսերի հետևանք է, առավել նպատակահարմար է փոխհատուցել նոր տեխնիկայի յուրացման կենտրոնացված ֆոնդի հաշվին: Վերջինս հնարավորություն է ընձեռում ապահովելու նոր տեխնիկայի նորմատիվային շահութաբերությունը՝ յուրացման կոնկրետ ժամանակաշրջանում: Դա իրականացնելու համար նախ անհրաժեշտ է կատարելագործել ձեռնարկությունների և միավորումների ինքնարժեքի պլանավորման գործող մեթոդոլոգիան, այնուհետև՝ որոշել նոր արտադրանքի թողարկման առաջին տարվա համեմատաբար բարձր ծախսերի այն հավելածի չափը, որը գոյանում է նոր արտադրանքի յուրացման հետևանքով:

Ձեռնարկություններում ինքնարժեքի պլանի հետագա կատարելագործումը ենթադրում է ամբողջ ապրանքային արտադրանքի ինքնարժեքի մեծության ճշտում և հիմնավորում՝ ելնելով բազիսային տարվա ինքնարժեքից: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել պլանային տարում թողարկվելիք նոր արտադրանքի ամբողջ ծավալի համար անհրաժեշտ ծախսումները, որտեղ ներառվելու են նաև նոր արտադրանքի թողարկման առաջին տարվա բարձր ծախսերը: Այս դեպքում հնարավոր է, որ թողարկվելիք ապրանքային արտադրանքի մեկ ուրբլու հաշվով ծախսերը նախորդ տարվա համեմատությամբ լինեն ավելի բարձր, եթե բազիսային տարում նոր արտադրանք չի յուրացվել, և ընդհակառակը՝ մեկ ուրբլուն ընկնող ծախսերը կարող են շատ ավելի ցածր լինել, եթե բազիսային տարում նոր արտադրանք է յուրացվել ավելի մեծ ծավալով, իսկ պլանային տարում յուրացման աշխատանքներ չեն նախատեսվել:

Նոր արտադրանքի համար սահմանված կայուն գների պայմաններում, երբ դրանք հաշվարկված են նոր արտադրանքի թողարկման նորմալ պայմանների համար, յուրացման ժամանակաշրջանում միջին ինքնարժեքի համեմատ արտադրության ծախսերի ժամանակավոր բարձրացումը կհանգեցնի ձեռնարկության շահույթի նվազեցմանը: Այս դեպքում նոր տեխնիկայի յուրացման կենտրոնացված ֆոնդից առանձնացվող միջոցները կդառնան լրացուցիչ ծախսերը ծածկելու աղբյուր և կնպաստեն ձեռնարկությունների նորմալ շահութաբերությանը: Ձեռնարկությունները նոր արտադրանք թողարկելիս այդ լրացուցիչ ծախսերը փոխհատուցելու համար չեն ձգտի արհեստականորեն բարձրացնելու գները: Առաջին տարվա համար այդ լրացուցիչ ծախսերի չափը (R) կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$R = r - \frac{100}{100 + \gamma_2}$$

որտեղ՝ Ի—ն նոր արտադրատեսակի ապրանքային արտադրանքի լրիվ ինքնարժեքն է թողարկման առաջին տարում:

Ա.—ն նոր արտադրատեսակի ապրանքային արտադրանքի ծավալն է:

Ն₂—ն արտադրատեսակի նորմատիվային շահութաբերությունն է (տոկոսներով):

Նոր տեխնիկայի յուրացման կենտրոնացված ֆոնդից նոր արտադրանք յուրացնող ձեռնարկությունը փոխհատուցվելու է նորույթի արդյունաբերական թողարկումը կազմակերպելու (տեխնոլոգիական պրոցեսը, աշխատանքային գծագրերը մշակելու, հատուկ սարքեր և գործիքներ նախագծելու, կադրեր պատրաստելու և այլն) հետ կապված ծախսերը: Ըստ գործող կարգի, նորույթի մշակման գիտահետազոտական և նախագծային աշխատանքները համարվում են ավարտված այն դեպքում, երբ պետական ընդունող հանձնաժողովի կողմից կազմվում է համապատասխան ակտ: Այնուհետև, նորույթի արտադրական ներդրման հետ կապված հարցերը ոչ մի ձևով չեն նախատեսվում նորույթը մշակող կազմակերպության թեմատիկ պլանում: Արդյունքը լինում է այն, որ նոր արտադրանք յուրացնող ձեռնարկությունը ստիպված է ինքնուրույն կերպով նախապատրաստել նրա արտադրական թողարկման աշխատանքները և միայն առանձին դեպքերում այդ աշխատանքներում ներգրավել նորույթի հեղինակներին: Այս բոլորի հետևանքով, ինչ խոսք, ձգձգվում են նոր արտադրանքի յուրացման ժամկետները և, բնականաբար, բարձրանում է ինքնարժեքը: Նման պայմաններում անհրաժեշտ է նորույթի արտադրական յուրացման աշխատանքների մեջ լայնորեն ներգրավել նաև գիտահետազոտական ու նախագծային կազմակերպություններին: Նորույթի յուրացման գործում վերջիններիս պատասխանատվությունը բարձրացնելու և տնտեսապես շահագրգռելու նպատակով անհրաժեշտ է նոր տեխնիկայի յուրացման կենտրոնացված ֆոնդից որոշակի միջոցներ առանձնացնել նաև հիշյալ կազմակերպություններին և այդ ուղիով տնտեսական կապեր ստեղծել մշակող և յուրացնող կազմակերպությունների միջև:

Փոխադարձ այդ կապը կարելի է ապահովել նոր տեխնիկայի արտադրությունը նախապատրաստելու համար ձեռնարկությանն առանձնացվող միջոցների մի որոշ մասը պայմանագրային կարգով (նոր արտադրանքի յուրացման հետ կապված վերահիշյալ աշխատանքների մի մասի կատարման համար) գիտահետազոտական և նախագծային կազմակերպություններին հատկացնելու եղանակով: Այս միջոցառումը հնարավորություն կընձեռի նոր արտադրանքի սերիական արտադրության նախապատրաստման փուլում ստեղծելու այնպիսի տնտեսական սլայմաններ, երբ նորույթը մշակողը նույնպես շահագրգռված կլինի մասնակցելու յուրացմանը՝ արագացնելով այն:

Հիշյալ եղանակով արդյունաբերական ձեռնարկության համար հնարավորություն է ստեղծվում ակտիվ մասնակցություն ցուցաբերելու նոր արտադրանքի մշակման մակարդակի վերջնական գնահատմանը և սահմանել մշակողի պարզևատրման շափը՝ կախված արտադրանքի տեխնիկատնտեսական բնութագրերից, և ոչ թե այդ արտադրանքի մշակման համար ծախսված աշխատավարձի ֆոնդից, մի բան, որ կատարվում է գործող կարգում:

Բացի այդ, արդյունաբերական ձեռնարկությունների տնտեսական շահագրգռվածությունը հնարավոր է բարձրացնել օգտագործվող արտադրության միջոցների գնահատման ցուցանիշների կատարելագործման ճանապարհով:

Սա հնարավոր է իրականացնել այն դեպքում, երբ պլանների լարվածության գնահատման և խթանման ֆոնդերի կազմավորման ներկայումս գործող կարգից անցում կատարվի այնպիսի ցուցանիշներով պլանների լարվածության գնահատմանը, որն արտացոլի արտադրության միջոցների օգտագործման ինտենսիվացման աստիճանի բարձրացումը և աշխատանքի արտադրողականության անհիմարային բնութագիրը: Այս նպատակով առաջարկում ենք վերանայել պլանների լարվածության գնահատման և խրախուսման ֆոնդերի կազմավորման ներկա համակարգը, որի հիմքում պետք է ընկած լինեն հետևյալ ցուցանիշները.

1. արտադրական ֆոնդերի օգտագործման ցուցանիշը (իրացված արտադրանքի հավելածի հարաբերությունը արտադրական ֆոնդերի հավելածին),
2. աշխատավարձի ֆոնդի օգտագործման ցուցանիշը (աշխատավարձի ֆոնդի հավելածի հարաբերությունը իրացվող արտադրանքի հավելածին),
3. նյութական ռեսուրսների օգտագործման ցուցանիշը (արտադրանքի ինքնարժեքի մեջ բոլոր տեսակի նյութական ծախսերի հավելածի հարաբերությունը իրացման ծավալի հավելածին):

Առաջարկված երեք ցուցանիշների դրական փոփոխությունը նախորդ ժամանակաշրջանի կամ պլանով նախատեսվածի համեմատությամբ, կարելի է գումարային ձևով արտահայտել որպես կապիտալ ներդրումների, աշխատավարձի և նյութական ծախսումների տնտեսման ընդհանուր մեծություն: Նշված երեք տարրերի տնտեսման գումարներից խրախուսման ֆոնդերին ճյուղային կայուն նորմատիվներով պետք է կատարվեն լրացուցիչ հատկացումներ:

Սերիական արտադրության առաջին տարվա բարձր ծախսերի գծով նոր տեխնիկայի յուրացման ֆոնդի պլանավորման և օգտագործման առաջարկվող եղանակը հնարավորություն է ընձեռում մշակելու նոր արտադրանք յուրացնող կոլեկտիվի նյութական խրախուսման արդյունավետ համակարգ և վերջինս դիտել որպես պլանների լարվածության գնահատման շորորդ ցուցանիշ:

Այսպիսով, մեր առաջարկած բանաձևով հաշվարկելիս յուրացման ֆոնդի մեծությունը կարելի է դիտել որպես նոր արտադրանքի յուրացման աշխատանքների որոշակի ծավալ: Ձեռնարկության, միավորման, գլխավոր վարչության տնտեսական խթանման ֆոնդերի պլանային գումարի մի մասի կազմավորումն անհրաժեշտ է կատարել կայուն նորմատիվով՝ յուրացման ֆոնդի մեկ ութու հաշվով:

Առաջին հայացքից թվում է, թե ձեռնարկությունը շահագրգռված կլինի ըստ հնարավորին մեծ գումարի յուրացման ֆոնդ ունենալ, որը սակայն իրականում այդպես չէ, քանի որ ինչքան մեծ լինի յուրացման ֆոնդի պահանջվող գումարը, նույնքան բարձր կլինի շահույթի լրացուցիչ պլանը: Բացի այդ, բարձր ծախսերը կարելի է օգտագործել միայն այն արտադրանքի յուրացման աշխատանքների համար, որը համապատասխանում է մեր կողմից առաջարկված «նոր տեխնիկա» հասկացությանը: Իսկ հաջորդ տարում անհրաժեշտ է ստեղծել ծախսերի այնպիսի մակարդակ, որն ապահովի ձեռնարկության նորմատիվային շահութաբերությունը, քանի որ նոր արտադրանքի արտադրության երկրորդ տարում բարձր ծախսերը չեն փոխհատուցվելու:

Վերը շարադրվածից պարզվում է, որ բարձր ծախսերի մեծ գումար կարելի է ստանալ միայն երկու դեպքում՝ ա) երբ նոր արտադրանքի վրա սահմանվեն հնարավորին չափ ցածր գներ. բ) երբ սերիական թողարկման առաջին

տարում զգալիորեն ավելացվի նոր արտադրանքի ծավալը: Նշված տնտեսական յուրացանիշների ձեռքբերումներն էլ անհրաժեշտ են գիտատեխնիկական առաջադիմության արագացումն ապահովելու համար: Եվ վերջապես, նոր արտադրանքը հնարավոր է շահութաբեր դարձնել նրա թողարկման երկրորդ տարում՝ հատկապես արտադրության ծավալի արագ ընդլայնման պայմանների գոյության դեպքում, որն իր հերթին, խթանվում է նոր արտադրանքի գների ցածր մակարդակով: Նոր արտադրանքի արտադրության յուրացման տնտեսական շահագրգռվածության մեխանիզմի կատարելագործումը այսքանով չի սահմանափակվում:

Մասսայական արտադրության մեջ գիտական նվաճումների արագ ներդրման համար ձեռնարկությունների շահագրգռվածությունը բացատրվում է ոչ միայն բարձր ծախսերի փոխհատուցման մեխանիզմով, այլև նրա թողարկման մասշտաբներով և յուրացման ժամկետներով: Սարքաշինական ձեռնարկությունների մեծամասնությունը ծայրահեղորեն դանդաղ է իրագործում նոր արտադրատեսակների յուրացումը, որի հետևանքով ծախսերի նախասկզբնական բարձր մակարդակը չի իջնում, իսկ նրանց արտադրությունը վնասաբեր է դառնում արտադրողների և անարդյունավետ՝ սպառողների համար: Այսպես, «էլեկտրոն» արտադրական միավորումը «Նաիրի—3—1» էՀՄ-ի սերիական արտադրության նախապատրաստական աշխատանքները կատարեց երեք տարվա ընթացքում: Սրա հիմնական պատճառն այն է, որ յուրացման ժամանակաշրջանում մեքենայի սերիական թողարկման ծավալն աննշան էր, ուստի փաստացի ինքնարժեքը բարձր էր և մոտ 1,5 անգամ գերազանցում էր մեքենայի գնի սահմանային մակարդակը: Մեկ այլ օրինակ: Երկար ժամանակ նախապատրաստվում էր 65 հազար թիվ հիշող օպերատիվ սարքի սերիական արտադրության յուրացման աշխատանքները: Նրա պատրաստման տեխնիկական առաջադրանքը հաստատվել է դեռևս 1970 թ., սակայն սարքի արտադրական յուրացումը ձգձգվելու հետևանքով ինքնարժեքը, ըստ 1974 թ. հաշվետվության, կազմեց 193,3 հազ. ռուբլի, այն դեպքում, երբ նրա մեծածախ գնի վերին սահմանը, ելնելով նրա կիրառման արդյունավետությունից, կազմում է շուրջ 120 հազար ռուբլի²: Ավելին, վերջին տարիներին հետազոտվող ենթաճյուղում ստեղծվել է այնպիսի դրություն, որ նոր մոդելների գերակշռող մասի սերիական արտադրության յուրացումը սկսվում է ոչ թե անմիջապես նրանց մշակումները ավարտելուց հետո, այլ երկրորդ և հաջորդ տարիներին: Իսկ դա, ինչպես վերը նշվեց, նախքան այդ մոդելների սերիական թողարկումը, մի շարք դեպքերում հանգեցնում է նրանց բարոյական ծերացմանը:

Նման պրակտիկական վերանայելու համար անհրաժեշտ է կիրառել յուրացման ժամկետների գիտականորեն հիմնավորված նորմատիվներ: Ներկայումս, սակայն, առանձին մոդելների համար նորմատիվների մշակումը ձգձգվում է և գործնականում չի օգտագործվում:

Այսպիսին են գիտական նվաճումների ներդրման արդյունավետության աստիճանի վրա ազդող հիմնական տնտեսական գործոնները: Բերված առաջարկությունների իրականացումը հնարավորություն կտա կրճատելու նոր տեխնիկայի «մշակում—արտադրություն» ամբողջ ցիկլը և դրանով իսկ նպաստելու հասարակական արտադրության արդյունավետության բարձրացմանը:

² Հաշվարկները կատարված են արտադրական միավորման փաստացի տվյալների հիման վրա:

ЭКОНОМИЧЕСКОЕ СТИМУЛИРОВАНИЕ ВНЕДРЕНИЯ НАУЧНЫХ ДОСТИЖЕНИЙ

ԳԱԳԻԿ ԲԼԵՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԳՈՄՑՅԱՆ

Резюме

В начальной стадии производства объективно неизбежна высокая себестоимость новой продукции, которая ухудшает экономические показатели предприятия. Чтобы компенсировать эти убытки, предприятия стремятся повышать цены на новую продукцию. Но высокие цены зачастую противостоят интересам потребителей.

Поэтому необходимо увеличивать централизованный фонд освоения новой техники за счет соответствующего увеличения себестоимости выпускаемой продукции и покрывать повышенные затраты первого года производства новой продукции из фонда освоения новой техники, т. е. возмещать предприятиям средства из этого фонда как их прибыль. Это даст возможность реализовать задачи экономического стимулирования освоения новой техники при двух условиях: во-первых, уточняется методология расчета и обосновывается план объединений и предприятий, во-вторых, повышенные затраты первого года производства новой продукции рассматриваются как объем работ по освоению новой техники.